ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» փետրվարի 2014 թվականի N: 22-Ա ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի» 4-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետի 2014 թվականի հունվարի 31-ի N 17-7-1188 և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2014 թվականի փետրվարի 5-ի N 01/24.3/980-14 գրությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմում Արամ Գրիգորյանի և Արթուր Փարսադանյանի փոխարեն ընդգրկել համապատասխանաբար Արտյոմ Անտիկյանին և Աշոտ Մուրադյանին:

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2008 թվականի հունվարի 7-ի N 4 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 176-Ա որոշման հավելվածում.

1) «Արամ Գրիգորյան - «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության Գյումրու մասնաճյուղի պետի տեղակալ» բառերը փոխարինել «Արտյոմ Անտիկյան- Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության Արագածոտնի և Շիրակի մարզերի տարածքային բաժնի պետ» բառերով:
2) «Արթուր Փարսադանյան- Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տրանսպորտային միջոցների տեխնիկական փորձաքննության բաժնի ավագ տեսուչ» բառերը փոխարինել «Աշոտ Մուրադյան-Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Գյումրիի հաշվառման-քննական բաժանմունքի ավագ տեսուչ» բառերով:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝